ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1965 Общественные науки

Լ. Գ. Խաչերյան

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԳԼԱՁՈՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Երբվանի՞ց է Վայոց Ձորը հիշատակվում աղբյուրներում։ Այս հարցադրումը հայագիտական գրականության մեջ առ այսօր չլուծված հարցերից մեկն է, որի լուսաբանումը կարևոր նշանակություն ունի միջնադարի մշակութային մեր խոշորագույն կենտրոնի՝ Գլաձորի համալսարանի պատմության համակողմանի ուսումնասիրման տեսակետից։

Մաշտոցի անվան Մատենադարանի 1511 համարի տակ գրանցված «Յայսմաւուրք»-ում, Մխիթար Սասնեցու վարքի մի այլ՝ երրորդ խմբագրությունը ընթերցելիս, հանդիպեցինք նաև Ներսես Մշեցուն վերաբերող կենսագրական ուշագրավ տեղեկություններին։ Վկայելով այն մասին, որ Մխիթար Սասնեցին իր հոր մահից հետո տեղափոխվում է Ապահունյաց գավառի Կերմանից գյուղը, որտեղ և ստանում է քահանայական ուսում, վարքագիրը շարունակում է. «Իսկ մեծ վարդապետն Ներսէս, ի հալածմանէ անաւրէն և ժանդաբարոյ ազգին մարաց և եկեալ ի սուրբ ուխտէն Ղազարու աշակերտաւն իւրով Եսայաւ, զոր և Ժե ամ անգ էր փոխեալ դասատուն վարդապետացն մերոց։ Եւ եկն ի գաւառն Քաջբերունեաց, ամ մի բովանդակ աստ և անդ շրջագայեալ և վարդապետական քարոզութեամբ զամենեսեան լուսաւորեալ զկարգաւորս և զաշխարհականս։ Եւ տեսեալ զերկիրն Քաջբերունեաց տգիտութեամբ վարանեալ առանց վարդապետական ուսման և յոյժ քաջալերեաց զկրաւնաւորսն հետևել աստուածաշունչ գրոց գիտութեան։ Եւ ինքն գնաց յերկիրն Սիւնեաց ի սուրբ ուխտն Գլաձորոյ»[1]։ Արդյոք սրանից հետևո՞ւմ է, որ Գլաձորը, իբրև պատմա-աշխարհագրական իրողություն, արդեն գոյություն ուներ, երբ Ներսես Մշեցին մեկնեց այնտեղ, թե՞, ընդհակառակն, դրա առաջացումն ու անվանակոչումը բացառապես կապված է Եսայի Նչեցու հետ և ճանաչում է գտել որպես այդպիսին միայն հետագայում։ Այս մասին հստակ կռահում անել՝ ելնելով միայն Մխիթար Սասնեցու վարքագրությունից մեջբերված խոսքերից չի կարելի, որովհետև վարքագիրը շատ ավելի ուշ շրջանի անձնավորություն է, քան մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը. երբ նա գրել է իր վարքագրությունը, Գլաձորը արդեն հասել էր այնպիսի հանրաճանաչ բարձունքի և հռչակի, որի մասին երկբայելը նույնիսկ անհնարին է փաստերի առատության պատճառով. Վարդան Աշխարհագրի ասելով՝ դա այն վայրն է, ուր գտնվում է «աթոռ և վարժարան սուրբ վարդապետացն մերոց»[2]։

Նույնը պիտի ասել նաև Ներսես Մշեցու վարքագիր Դանիելի հաղորդման մասին, որ պաշտոնապես անցել է «Յայսմաւուրք»-ում. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս մեծ և անուանի վարդապետն մեր Ներսէս՝ ի վանս Գլաձորոյ էջլգ (1284) թուականիս մերոյ»[3]։

Բազմավաստակ հայագետ Գ. Հովսեփյանը հայտնում է, որ աղբյուրներում Գլաձորի մասին առաջին տեղեկությունը հաղորդվում է 1280 թվականից. «Առաջին անգամ վանքի (իմա՝ Գլաձորի — Լ. Խ.) անունը յիշւում է 1280 թուին, երբ Ներսէս Մշեցին հաստատեց այնտեղ իւր վարժապետական աթոռը»[4]։ Նրա այս պնդումը վավերական համարելու համար անհրաժեշտ էր ստուգել ձեռագրական այն աղբյուրը, որի վրա հենվում է Գ. Հովսեփյանը՝ սակայն առանց նրանից համապատասխան քաղվածք բերելու. մի բան, որ հակասում է մեծանուն բանասերի փաստաքննական ոճին։ Քննությունից պարզվեց, որ Մաշտոցի անվան Մատենադարանի 1097 համարի տակ պահվող ձեռագիրը իրոք հորինված է 1280 թվականին՝ Լուսեր և Թովմա գրիչների կողմից՝ Եսայի Նչեցու խմբագրությամբ։ Միայն 321ա էջում գտանք այն հիշատակագրությունը, որը պահպանելիս է եղել տեղեկություն՝ գրչագրի ստացման, ինչպես և հորինման մասին։ Դժբախտա-

1 Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 1511, թ. 327ա։

2 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատ. Հ. Պէրպէրեանի, Փարիզ, 1960, էջ 15։

3 «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ յծը (358)։

4 Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, 1944, Երուսաղէմ, մասն Բ, էջ 191։

բար այդ թերթի վերևի անկյունից բավականաչափ պատռվել է ու մեզ հետաքրքրող մասը չրացել. Տեքստերի ընթերցմամբ, սակայն, կարողացանք վերականգնել լուսանցքի ձախ անկյունում՝ «(Վայ)ոյ ձոր» տեղանունը, որով փարատվում են բոլոր կասկածները և հաստատվում, որ ձեռագիրը գտնվելիս է եղել, ուստի և ընդօրինակվելիս՝ ոչ այլուր, քան Վայոց ձորում, իսկ միակ հավանական մենաստանը, որը կապված է Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու գործունեության 1280-ական թվականների հետ՝ Աղբերց վանք-Գլաձորն է։ Բայց սրանով դեռ առաջադրվող հարցին սպառիչ պատասխան գտած չենք լինում, այն է՝ արդյո՞ք մեր աղբյուրներում Գլաձորը արդեն հիշատակվում է 1280-ական թվականներից.—քաղվածքից հետևցնել այդ չենք կարող. «... Ես տառատիպխալս... (Ստեփան)ոս, սիրող բանի և սպասաւոր, ճանապարհորդ(եալ)... (Վայ)ոյ ձոր, հադիպեցայ ըստ նախատեսութեանն աստուծոյ ա/յս/ ժո/ղովածուին/... ճգնաւորի միոյ, որոյ անուն Յակոբ յորջորջիւր, որ և ի...ծերպս վիմացն քողեալ մարմնով, որ և ուռճացեալ հոգով, հանապազ/...մա՞ն քրիստոսի յինքն բերելով, ըստ մարգարէին, թէ վասն քո մեռանիմք զար/իւբար/... և ի հարկաւորացն նայև ի վայելչականացն՝ նահանջեալ էր զինք. բարի կամօք և աստուածագութ սիրով, որ ունէր առ աստուած, ընկալաւ զմեզ։ Եւ զի ոչ գոլով մեր նիւթ վարդապետութեան, որ են գիրք վմատեանս զայս յաճախապատում թագաւորութեանց՝ մեզ շնորհեաց յիշատակ բարի իւրն և ծնօղաց իւրոց, և մեր ընկալեալ իբրև զաւրհ(ն)ութիւն և որպէս պատարագ նուէր աստուծոյ։ Որ հանդիպիք այսմ տառի, յիշեսջիք զառաջին երախտաւորք սորայ և զվերջին երախտաւորք սորայ առաջի զենման անմահ գառին աստուծոյ՝ զգութ և զողորմութիւն հայցելով յաստուծոյ, նորա և մեզ և զյիշողսդ յիշէ անմոռացն աստուած յարքայութիւն ամէն»[5]։

Ինչպես կարելի է որոշակիորեն կռահել քաղվածքի ընդհանուր ոգուց և իմաստից՝ Ստեփանոս անունով ուսումնական մի վարդապետ («սիրող բանի և սպասաւոր») ճանապարհորդելիս է եղել Վայոց ձոր, որտեղ Հակոբ անունով մի ճգնավոր նրան է նվիրել սույն ժողովածուն։ Իսկ թե՝ ե՞րբ է այդ տեղի ունենում, ոչ մի ապացույց չունենք. բայց կասկածից դուրս է, որ գրչագրի հորինման ժամանակից հետո։ Հետևաբար, եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ Վայոց ձոր բառից առաջ պատռված մասում Գլաձոր անունը նշված լինի /ինչ-որ տվյալ կոնտեքստում բոլորովին անհավանական է), որը Գ. Հովսեփյանը ընթերցած լիներ դրա ամբողջական վիճակում եղած ժամանակ, ապա դարձյալ այն չէր նպաստի առաջադրվող հարցի լուծմանը. և դա միանգամայն հասկանալի պատճառով. եթե սույն գրչագրում առկա այլ հիշատակագրությունների տվյալներով աներկբայորեն հաստատվում է, որ այն գրվել է 1280 թվականին՝ Լուսեր ու Թովմա վարդապետների կողմից և Եսայի Նչեցու խմբագրությամբ՝ Ներսես Մշեցու համար, ապա գրության վայրի մասին հայտնող այս վերջին հիշատակագրությունը ոչ թե ժամանակակից է գրչագրի հորինմանը, այլ հետագայի՝ ավելի ուշ ժամանակների։

Անցողակի նկատենք, որ ձեռագրական աղբյուրների ավելի վաղ հիշատակություն՝ Վայոց ձորում Ներսես Մշեցու կամ Եսայի Նչեցու հետ կապված ձեռագիր ընդօրինակելու մասին, քան սույն գրչագիրը, բանասիրությանը հայտնի չէ։ Իսկ Վարդան Աշխարհագրի հայտնի վկայությունը վերաբերում է ոչ թե Գլաձորի հիմնադրմանը, այլ նրա գործունեության ամենածաղկուն շրջանին։

Այսպես, ուրեմն, եթե հերքվում է Գ. Հովսեփյանի պնդումը այն մասին, որ Գլաձորը իբր ձեռագրական աղբյուրներում առաջին անգամ հանդիպում է 1280 թվականից, ապա երբվանի՞ց է ստուգապես դրա մասին առաջին հիշատակությունը գրանցվում մեր մատենագրության մեջ։ Ինչպես տեսնում ենք՝ հարցադրումը մնում է առկախ, ուստի և այն կարոտ է նոր ապացույցների ու փաստարկումների։ Այսպես, Ղ. Ալիշյանը միանգամայն իրավացի է, երբ թափանցիկ դիտողությամբ մի ծանրակշիռ հարցական է դնում, որը մղում է հետագա հետազոտողների միտքը նորանոր որոնումների՝ նաև տարբեր ուղիներով ու պեղումներով։ «Զարմանաց է, — գրում է նա, — զի պատմիչն Սիւնեաց ոչ յիշէ զայս վանս (զԳլաձոր — Լ. Խ.), բերես զի նոր էր ճաստատեալ...»[6]։ Այստեղ խոսքը, անշուշտ, վերաբերում է մատենագիր Ստեփանոս Օրբելյանին, որը նույնիսկ աշակերտել է Ներսես Մշեցուն, ուստի և միաժամանակ գտնվելիս է եղել նրա հիմնադրած դպրեվանքում։ Այս առնչությամբ Ստեփանոս Օրբելյանը ունի նաև ինքնակենսագրական բնույթի վկայություններ. «...Վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից. սակաւ մի առեալ զճաշակ ուետնի քաղցրութեանն՝ առի ճրաման յաստուածազգեաց և յաշխարհճայոյս րաբունապետէն Ներսիսէ, և տեսաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետականն»[7]։

---

[5] Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 1097, թ. 321ա։

[6] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 130։

[7] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 492։

Եվ իրոք, բնականաբար այստեղ հարց է ծագում. Ստեփանոս Օրբելյանը, նույնիսկ Ներսես Մշեցու աշակերտը լինելով հանդերձ Գլաձորում, այդ ինչպե՞ս է, որ իր Պատմության մեջ չի հիշատակում Գլաձորը, մանավանդ, երբ առիթ է ունենում խոսելու նաև Սյունիքի վանքերի մասին։ Այս առնչությամբ՝ հավանականությունից զուրկ չէր լինի Ղ. Ինճիճյանի հետևյալ ենթադրությունը, եթե այն ամրապնդվեր նաև համապատասխան վկայակոչումներով ու փաստերով. Նրա կարծիքով՝ Օրբելյանը կա՞մ Խորաձոր անապատի մասին հիշատակելիս Գլաձորն է նկատի ունեցել, և կա՞մ պարզապես դանց է առել այն՝ Սյունիքի վանքերի թվարկումը չծանրաբեռնելու համար[8], ասելով. «Բայց այլ ևս բազումք (վանորայք — Լ. Խ.) կային զորս ոչ թուեցաք»[9]։ Ըստ որում ավելի ճշմարտամոտ լինելու պատրանք է թողնում Ղ. Ինճիճյանի ենթադրության առաջին մասը։ Եվ ահա թե ինչո՞ւ. Գլաձոր անվանումը ստուգաբանորեն միջնադարում ընկալվել է, ի շարս այլ նշանակությունների, հավանաբար նաև իբրև «խորանդունդ ձորի» եզերքում կառուցված մի շինություն, որը թվում է թե գլորվելու վրա է, կամ էլ՝ ձորում գտնվող շինություն։ Նման անունով միջնադարյան Հայաստանում հայտնի են երկու վանքեր՝ մեկը Մուշի Առաքելոց վանքն է, որը զուգահեռաբար կոչվել է նաև Գլաձոր, ուր իրենց առաջին ուսումնառությունն են ձեռք բերել Ներսես Մշեցին և Եսայի Նչեցին, մյուսը՝ Վայոց ձորում Ներսես Մշեցու-Եսայի Նչեցու հիմնադրած գիտական-ուսումնական կաճառը։ Գլաձորի՝ ստուգաբանական առաջին մասի բացատրությունը, սակայն, լրիվ համապատասխանում է Մուշում գտնվող Գլաձորի դպրևանքի դիրքին։ Մուշի Առաքելոց վանքի նաև Գլաձոր անվանման կապակցությամբ Ն. Սարգիսյանը գրում է. «Մենաստանս Առաքելոց կոչի և Գլաձորոյ վանք, բերևս վասն խորանդունդ ձորոյն որ է յաջմէ մենաստանին..»[10] (ընդգծումը մերն է — Լ. Խ.)։ Մինչդեռ երկրորդ մասի բացատրությունը սպառիչ է Վայոց ձորի մեր նշանավոր համալսարանի դիրքի համար, որովհետև վերջինս գտնվում է «Բաշքենդ գյուղի հյուսիս-արևելյան կողմը մի ձորագոգի մեջ»[11]։

Իսկ ինչ վերաբերում է Ղ. Ինճիճյանի ենթադրության վերջին մասին, ապա այն հավանականություն չի ներշնչում, որովհետև Վայոց ձորի Գլաձորը, Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» ստեղծման ժամանակաշրջանում՝ 1297—1299 թվականներին, այնպիսի հռչակի հասած ուսումնական-մշակութային խոշոր կենտրոն էր, որն անտեսել չէր կարելի։

Բայց ի՞նչպես է իրերի վիճակը իրականում, ի՞նչ կապակցության մեջ է Ստեփանոս Օրբելյանը հիշատակել Խորաձոր անապատը, որից կարելի է ճիշտ եզրակացություն բխեցնել. նա գրում է. «...և միս իշխանն Համտուն... գնաց ի Վայոց ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր Տէր Յովհաննէս, որ բնակէր ի Խորաձոր անապատին որ Նորավանս կոչի, մերձ Հրաշկաբերդոյն...»[12]։ Երկմտությունը, այսպիսով, փարատվում է. «Խորաձոր անապատը» թեև իմաստային ընդհանրություն ունի «Գլաձորի» հետ, սակայն Օրբելյանը կիրառել է այն միայն իբրև «Նորավանք»-ի փոխանուն, որպես վերջինիս տարբեր անվանումը։ Ըստ որում անցողակի նկատենք նաև, որ մեր մատենագրության մեջ, որքան հայտնի է, բացի Օրբելյանի «Պատմության» մեջ տեղ գտած գործածությունից, այլուր չենք հանդիպում «Խորաձոր» անվան կիրառմանը։

Բացի այդ ունենք նաև մի այլ դպրատուն — մենաստան, որը թեև իր անվանակոչմամբ համանման է «Խորաձոր»-ին և միաժամանակ բավական հռչակ հանած, բայց դարձյալ չի առնչվում Վայոց ձորի Գլաձորի հետ. այն հայտնի է «Խորնիձոր», «Խորին անապատ» կամ «Ձորն Խորնի» անուններով. ընդ որում չնայած այն բանին, որ վերջինիս գործունեությունը զարմանալի զուգադիպությամբ համընկնում է Վայոց ձորի համալսարանի գոյության ժամանակաշրջանին, սակայն դրանք իրենց աշխարհագրական դիրքով գտնվելիս են եղել բոլորովին հակառակ բևեռներում. առաջինը՝ Կիլիկիայում, երկրորդը՝ Վայոց ձորում։ Թովմաս Հռոմկլացիի հավաստմամբ՝ Խորին անապատը տեղադրված է եղել «Մերձ ի սահմանս Բարձրբերդոյ և Լեռնկլայ անառիկ բերդի»[13]։ Այստեղ արտագրված ու բազմացված ձեռագրեր ունենք, որոնք ապացուցում են այս մենաստանի անվիճելի մասնակցությունը Կիլիկյան Հայաստանի ընդհանուր մշակութային և հասարակա-

---

8 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, 1822, Վենետիկ, էջ 263։

9 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 340։

10 Ներսես Սարգիսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1854, էջ 236։

11 Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, «Արարատ», 1899, էջ 160։

12 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337։

13 Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 208, տես նաև Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1907, հ. 2, էջ 203, Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 535—536։

կան կյանքին։ Այս կապակցությամբ Ստեփանոս Օրբելյանը ականատեսի և ականջալուրի վկայությամբ գրում է. «Յետ սրբասէր կաթողիկոսին Հայոց Տեառն Յակոբայ մեծաւ հանգիսիւ և աշխարհաժողով ամբոխիւ նստացուցանեն կաթողիկոս Հայոց ի Սիս յաւագ եկեղեցին սուրբ Սոփի զԿոստանդին վարդապետ, որ էր առաջնորդ սուրբ և գերաճռչակ մենաստանին խորին կոչեցելոյ, մեծապատիւ շքով և արքունական ճոխութեամբ, ձեռամբ թագաւորին Հայոց Լևոնի՝ որդւոյ Հեթմոյ, ընդ որս և էր մեր նուաստութիւնս»[14]. Կամ՝ 1311 թվականին գրված մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Ի Ձորս խորնի, ընդ հովանեաւ սուրբ Տիրամօր և սուրբ նշանաց, ի խցկան միոջ որ է ի հարաւակողմն Պերճեր անապատիս, ի խնդրոյ սուրբ և ընտրեալ կրօնաւոր քահանայի՝ Պետրոսի, ձեռամբ պիտակ անուն քահանայի Կոստ/անդնի/ և ողորմելի գերւոյ Հեթմնցւոյ»...[15]։

Մյուս կողմից՝ բոլոր հիմքերը կան ակնկալելու, որ Ստ. Օրբելյանը հիշատակեր եթե ոչ հետնաւույն Գլաձոր անունը իբրև համալսարան, ապա գոնե այդ մենաստանի նախկին անունը, մանավանդ նաև այն պատճառով, որ թվարկման հերթականության մեջ մոտենում է Մշեցու-Նչեցու համալսարանի հենց բուն տեղադրմանը. Նա նշում է Թանատի վանքը, «յորում կայ նշխարք սրբոյն Ստեփաննոսի»[16]։ Հենց սրանից անմիջապես հետո էլ պետք է հիշվեր Աղբերց վանքը կամ Գլաձորի համալսարանը։ Բայց, տարաբախտաբար, զանց է առնվում, և հիշատակվում են այլ վանքերի անունները։

Մի ուրիշ հանգամանք նույնպես առավել քան պարտավորեցնում էր հեղինակին հիշատակելու Գլաձորի համալսարանը. վանքերի ու մենաստանների թվարկումը ավարտելուց հետո, հեղինակը եզրակացնում է. «Ահա այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորագունիցն, յորոց բազումք ամայի և թափուր են ի շինութեանց, և սակաւքն ի լուսաւորութեան այժմ, որք են թուով 30. բայց այլ ևս բազումք կային զորս ոչ թուեցաք»[17]։ Ընթերցողի ուշադրությունը բևեռում ենք ընդգծված տողերի վրա. եթե Ստեփանոս Օրբելյանի հականե անվանե թվարկած Սյունիքի վանքերի ու մենաստանների մեծամասնությունը «թափուր են ի շինութեանց» և նրանցից միայն քչերն են՝ «ի լուսաւորութեան այժմ», ապա բնականաբար ենթադրվում է, որ այժմ «սակաւքն ի լուսաւորութեան» մեջ գտնվող վանքերից ու մենաստաններից առաջին հերթին հիշատակության արժանի պետք է լիներ Աղբերց վանքը կամ Գլաձորը, որովհետև տարակույս չի կարող լինել, որ այդ քչերի մեջ տվյալ ժամանակաշրջանի ամենապայծառ մենաստանը միջնադարյան աշխարհում՝ Մշեցու-Նչեցու համալսարանն էր՝ իր երփներանգ ճառագայթմամբ ու շողարձակմամբ։

Ի դեպ՝ Ալիշանի այն ենթադրությունը, ըստ որի Օրբելյանը եթե իր «Պատմութեան» մեջ չի հիշատակել Վայոց ձորի վանքերի թվարկման մեջ նաև Գլաձորը, ապա դրա պատճառը պետք է համարել՝ «թերևս զի նոր էր հաստատեալ» Գլաձորը[18], նույնպես ընդունելի չէ, որովհետև Օրբելյանի «Պատմության» հեղինակման ժամանակ Գլաձորը գտնվում էր իր ամենափառահեղ շրջանում։

Եզրափակելով այս հարցադրումների ամբողջ շարքը, մենք դարձյալ կանգնում ենք առկախ մնացած պատասխանի առաջ. փաստը մնում է փաստ, որ Օրբելյանը Վայոց ձորի վանքերի թվարկման մեջ չի հիշատակել Գլաձորի համալսարանը։ Սրանից, բնականաբար, միայն մեկ հնարավոր ենթադրություն կարելի է անել, թեև հավանականության ամենադույզն նշույլով. գուցե հեղինակը Աղբերց վանքի կամ Գլաձորի մասին նույնպես հիշատակում արել է, բայց իր աշխատության արտագրությունների ժամանակ վրիպել է գրիչների կողմից և մեզ չի հասել նրա այդ վկայությունը։ Կողմնակի կերպով նույնիսկ գիտենք, որ Օրբելյանը իր անձնական նամակներում և շրջաբերականներում Եսայի Նչեցուն դրվատելիս, բնութագրում է նրան իբրև «յիսուսական համալսարանացն պետ», «ով դպրապետ աննառ դպրոցացն և համակ դիւան աննմասական խորոցն վարդապետ Եսայի». այս և նման արտահայտություններում, անտարակույս, նկատի է առնվել Եսայի Նչեցու երկարամյա պաշտոնավարությունը Գլաձորի համալսարանում որպես ուսուցչապետ։ Ավելին. այն դեպքում, երբ Օրբելյանը Աղբերց վանքում՝ Ներսես Մշեցու մոտ ձեռք բերած իր ուսումնառության մասին խոսելիս թեև չի հիշատակում այդ մենաստանի

---

14 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 436—437։

15 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 536։

16 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 340, ընդգծումը մերն է—Լ. Խ.։

17 Նույն տեղում։ Ընդգծումը մերն է—Լ. Խ.։

18 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 130։

անունը, բայց ինքնին հասկանալի է, թե խոսքը ինչին է վերաբերում[19]։ Օրբելյանը նույնիսկ ուղղակի ակնարկ ունի Գլաձորի համալսարանի մասին՝ որպես Հայաստանյաց աշխարհի «արեգակնափայլ», «գերահռչակ» և «մեծաշուք» ուսումնական կենտրոնի, որպես գիտության և ուսման փարոսի, թեև առանց նրա անունը հիշատակելու. «Արեգակնափայլ և երկնաճանդէս գերաճոչակ հոյակապ և մեծաշուք վիճագոյն ուխտիդ Հայաստանեացս աշխարհի, տեղի յուսոյ և ակնկալութիւն և պարծ/անք/ աստուածային հանճարոյն համեղութեան ճաշակացն ընտրութեան, անաւք վեհագոյն և երկնակենցաղավարուց և ուսման, մակացութեանց ներբնդունակ»[20]։ Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է Գլաձորի համալսարանին։

Ինչևիցե, եզրակացնենք. եթե բացակայում են Օրբելյանից ուղղակի վկայություններ Գլաձորի գիտական կաճառի առաջացման ու գործունեության վերաբերյալ, ապա այդ չի նշանակում, որ մեր մատենագրությունը առհասարակ լռում է Գլաձորի գոյության մասին, ուստի և դրա պատմության լուսաբանումը խափանված պիտի համարել։ Ընդհակառակն, հենց մատենագրական այլ աղբյուրների օգնությամբ հնարավոր կլինի հետևել մեր ամենալուսավոր մշակութային կենտրոնի տարեգրության ընթացքին։

Մեզ հասած ձեռագրական ամենավաղ աղբյուրը, որը որոշակի տեղեկություն է պարունակում Մշեցու հիմնադրած դպրեվանքի անվանակոչման մասին, հորինված է 1283—1284 թվականներին, այժմ պահվում է Վիեննայի Մատենադարանի 571 համարի տակ և բովանդակում է զանազան լուծմունքների մի ժողովածու։ Դրա պատվիրատուն եղել է ոչ այլ ոք, քան «բարունեաց վարդապետ» Ներսես Մշեցին. «...էր թիւ հայկազեան սեռի ՉԼԲ (1283) և թագաւոր Լեոն... և վարժապետ և խրատիչ սուրբ վարդապետ Ներսէս, որոյ հրամանաւ գրեցի զսայ մեղապարտ Մատթէոս, որ դեգերեալ կայի առ ոտս սորա...»։ Գրիչը Մաթեոս Մլիճեցին է, որը ունի նաև չափածո մի հիշատակարան սույն ժողովածուի 208բ—210ա էջերում, գրված՝ 1284 թվականին, և այն լույս է սփռում առաջադրված հարցի մեկնաբանման վրա։ Ինքնակենսագրական բնույթի որոշ տեղեկություններ հաղորդելուց հետո, Մաթեոս գրիչը շարունակության մեջ ասում է իր մասին.

«... Որոյ (Մատթէի — Լ. Խ.) եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայ ձոր կոչի,
Հուպ ի շիրիմն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Ներսէսի
Եւ բարունեաց վարդապետի,
Հասեալ ի ծայրս իմաստ բանի,
Քննէր զգիրս մատենի...»[21]։

Այս քաղվածքը ուշադրության է արժանի մի քանի նկատառումներով. նախ՝ անկասկածորեն հավաստվում է, որ Մատթեոս գրիչը ուսումնառության նպատակով եկել է Վայոց ձոր՝ Ստեփանոս Սյունեցու շիրիմի մոտ գտնվող Աղբերց վանքը։ Երկրորդ ուշագրավ է, որ Աղբերց վանք ուսումնական կենտրոնը բնութագրվում է իբրև «պանծալի երկրորդ Աթենք»։ Այստեղից, անտարակույս, հետևում է, որ Գլաձորի համալսարանի նախկին անվանումը եղել է Աղբերց վանք. ապացույց՝ որ «երկրորդ Աթէնք» արտահայտությունը մեր ամբողջ մատենագրության մեջ բացառապես կիրառվել է միայն Գլաձորի նկատմամբ, մանավանդ Եսայի Նչեցու ղեկավարման առավել ծաղկուն տարիներին, և դրա առանձին գործածությունը նույնիսկ հոմանիշային արժեք է ձեռք բերել Գլաձորի համար։ Մյուս կողմից՝ «երկրորդ Աթենք պանծալի» արտահայտությունը ամենևին էլ պատահական հայտարարություն կամ բովանդակազուրկ գնահատական չէ, որը գիտվեր սոսկ իբրև ոգեշնչման զեղում կամ էլ պարզապես չափազանցություն։ Ո՛չ երբեք։ Միջնադարի չափանիշով նման գնահատականը լիովին արդարացվում է Գլաձորի համար, որովհետև հայ հասարակական ու գիտական մտքի վերընձյուղման ու զարգացման մեջ իրոք նա թողել է այնպիսի խորը դրոշմ ու լայնահուն ակոս, առանց որի մեր մատենագրության հետագա ամբողջ

19 Ի դեպ՝ նույնիսկ Եսայի Նչեցին իր գրագրություններում երբեք չի հիշատակում իր գլխավորած համալսարանի անունը։

20 Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 848, թ. 78բ—79ա։

21 Լ. Տաշյան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1039։

ընթացքի բողբոջումը անհնարին կլիներ։ Երրորդ՝ ի հաստատումն այն բանի, որ Աղբերց մենաստանը իր հռչակով վեր էր ածվել «յերկրորդ Աթէնս պանծալի», այնտեղ դեռևս 1284 թվականին, ինչպես բխում է քաղվածքից, մեղվաջան աշխատանքի էին լծվել մի շարք բաբունիներ (իմա՝ տարբեր առարկաների ուսուցիչ-դասախոսներ). այլապես չէր ասվի Ներսես Մշեցու մասին՝ «րաբունեաց վարդապետս», երբ վերջինս՝ հասած լինելով իր ժամանակի իմաստության ու գիտության ծայրագույն աստիճանին՝ գլխավորում էր Աղբերց վանք ուսումնական-մշակութային հաստատության ղեկավարման աշխատանքները և քննական հայացքով թափանցում էր մեր մատենագրության մեջ ու վերլուծում մատյանները...

Ձեռագրական հետագա աղբյուրները, տարաբախտաբար, առժամանակ լռում են։ Միայն 1291 թվականին հիշատակագիր Հովհաննեսը իր արտագրած «Մեկնութիւն կաթողիկէի» գրչագրում թողնում է շատ արժեքավոր մի վկայություն՝ շոշափվող հարցի առնչությամբ, որը կարևոր պարզաբանում է մտցնում հարցի պատմականության ճշգրտման մեջ. ի դեպ անհրաժեշտ ենք համարում նշել, որ սա միաժամանակ մատենագրության մեջ արտացոլված առաջին հիշատակությունն է Գլաձորի մասին. «Ի թւիս Չխ (1291), — կարդում ենք այնտեղ, — գրեցաւ Մեկնութիւն Կաթուղիկէիս, ձեռամբ բազմամեղ և սուտանուն կրաւնաւորի Յոհաննիսի աշակերտի բանի, ի մենաստանս որ կոչի Աղբերց վանս. և մականուն՝ Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի, ի վարժապետութիւնս գիտնական և արդիւնական մեծ հռետորի յեսայյի, զոր նորոհեսցէ զսա մեզ տէր ընդերկայն աւուրս»[22]։

Քաղվածքում ուշադրություն պետք է դարձնել «մականուն» բառի վրա, որը և որոշակի լույս է սփռում արծարծվող հարցադրման ճիշտ մեկնաբանման ուղղությամբ. առանց այլևայլության և ակնբախորեն բացահայտվում է սրանով, որ մենաստանը նախապես կոչվելիս է եղել Աղբերց վանք, իսկ Գլաձոր անվանումը տրվել է նրան հետագայում՝ իբրև «մականուն», այսինքն՝ իբրև «վերադիր» կամ «հավելադիր» անուն, որ և նույնն է թե՝ «հետագայում ստացած անուն». Հենց այս վերջին անվանակրությամբ էլ համընդհանուր ճանաչում է գտել այդ մենաստանը մեր մշակույթի պատմության մեջ։

Մյուս կողմից՝ այս քաղվածքը մեզ համար կարևոր է նաև մի այլ առումով. ելնելով սույն վկայության բովանդակությունից, աներկմտորեն կարելի է եզրակացնել, որ դեռևս մինչև 13-րդ դարի վերջին տասնամյակը, նույնիսկ Եսայի Նչեցու ղեկավարման առաջին շրջանում, Գլաձորի համալսարանը հայտնի է եղել միայն Աղբերց վանք անունով. այլ կերպ ասած՝ ուսումնական այդ կենտրոնի Գլաձոր անվանումը ոչ միայն Ներսես Մշեցու օրոք առհասարակ չի եղել, այլև չի եղել նաև Եսայի Նչեցու ուսուցչապետության սկզբնական շրջանում՝ մինչև 1290-ական թվականները։ Այստեղ, սակայն, անցողակի նկատենք, որ բոլորովին չպատճառաբանված և հիմնազուրկ հայտարարություն է արվեստաբան Ա. Ավետիսյանի պնդումը այն մասին, որ իբր Գլաձորի անվանումը տեղի է ունեցել Ներսես Մշեցու ուսուցչապետության շրջանում. նա գրում է «Համալսարանն էլ իր նոր՝ Գլաձոր անվանումն ստացավ Ներսես Մշեցու վարդապետության օրոք»[23]։

Այնուհետև. ուշագրավ է, որ 1298 թվականին արտագրված մի ձեռագրի միևնույն գրչի թողած երկու հիշատակագրություններում խոսվում է ինչպես Գլաձորի, այնպես էլ Աղբերց վանքի մասին. այսպես ա)

«Ընդ նմին և զեղկելիս
Ձվերագծող այսմ տառիս
Ի մենաստանս Գլաձորիս,
Ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսիս,
Ձեռամբ անարժանիս Մկրտչիս
Եվ դերանուն կրաւնաւորիս,
Որ սպասաւոր եմ լեալ բանիս,
Միայն անուամբ ու ոչ ըստ գործիս,
Ընդ խնամաւք վարժապետիս
Կայծակնամաքուր մեծ հռետորիս
Անունակիր մարգարէիս
Որ յորջորջի իսկ Եսայյիս»[24]։

22 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 525։
23 «Էջմիածին» ամսագիր, թիվ Դ—Ե, 1956, էջ 86։
24 Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 1409, թ. 261բ։

բ) Ի դեպ՝ առաջադիր մյուս վկայության մեջբերման կապակցությամբ ասենք, որ թեև այդ հիշատակարանը դարձյալ վերոհիշյալ գրչին է պատկանում, սակայն նրանում զարմանալիորեն նույն բնութագիրն ու գնահատականն է տրված Աղբերց վանքի մասին, ինչ 1283—1284 թվականներին գրված Մաթեոս գրչի հիշատակարանում, որը մեզ արդեն ծանոթ է. ըստ որում նկատենք, որ այստեղ գործ ունենք պատճենման ակնբախ փաստի հետ. կառուցվածքով ու ձևով էլ համանման է դրան՝ չափածո և նույն հանգավորմամբ, սակայն որոշ խմբագրման ենթարկված՝ դեպքերի ու դեմքերի համաձայն, գրված Եսայի Նչեցու ուսուցչապետության օրոք։ Ընդ որում սույն գրչագիրը, ամփոփելով իր մեջ մի շարք իմաստասիրական և դավանաբանական երկեր, հանդիսանում է կարևոր մի ձեռնարկ՝ ուսումնական նպատակների համար նախատեսված.

«Ի նահանկէ Այրարատի

. . . . . .

Մեր ի դղեակն է, ի Բրջնի,
Առ սահմանաւքն Կոտայի,
Որոյ եկեալ յայս գաւառի,
Որոյ անուն Վայ ձոր կոչի,
Հուպ ի շիրիմն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի,
Երկրորդ Արեն պանծալի
Առ ոտս հաւր մեր Եսայի
Եւ բարունեաց վարժապետի...»25։

Սրանից բխում է, որ այս մենաստանի Աղբերց վանք անվան հարատևումը, Գլաձոր «մականվան» հետ զուգահեռ, դեռևս շարունակվում է մինչև 13-րդ դարի վերջը, իսկ դրանից հետո, ձեռագրական աղբյուրների վկայությամբ՝ աստիճանաբար մոռացության է տրվում այդ հին անունը և տիրապետող ու միակ հանրածանոթ անունը դառնում է Գլաձորը։

Այս հետևության ճշտությունը ամրապնդվում է նաև մատենագրական այլ փաստերով։ Այս առնչությամբ առավել հատկանշական է հետևյալ վկայությունը. Եսայի Նչեցու ականավոր աշակերտներից Մխիթար Սասնեցու վերաբերյալ «Պատմութիւն հաւաստի և համառօտ Մխիթար վարդապետի (հեղինակի գրքոյս)» վարքագրության մեջ հայտնվում է. «... և անտի գնացեալ (Մխիթարայ — Լ. Խ.) ի գաւառն կոչեցեալ Վայոց ձոր, ի վանսն, որ այժմ կոչի Գլաձոր, առ գերակատար և սուրբ վարդապետն Ներսէս և կացեալ անդ ընդ նմա ամս երեք»26։ Այստեղ հատկապես ընդգծեցինք այժմ բառը, որով աներկբայորեն բացահայտվում է քաղվածքի բովանդակությունը. նշանակում է, որ վանքի Գլաձոր անվանումը վերաբերում է միայն ներկային, իսկ նրա նախկին անունը արդեն չի հիշատակվում. վարքագրության հորինման ժամանակ, այն է՝ 1337 թվականին, թվում է, թե արդեն մոռացության է տրվել նրա սկզբնական անունը՝ Աղբերց վանք լինելը։ Բացի դրանից, այստեղ ակներևորեն առկա է անվանափոխության բացահայտ փաստը, որով ցույց է տրվում, թե ուսումնական այդ կենտրոնի Գլաձոր անվանակրումը եղել է ոչ թե ի սկզբանե, այլ՝ հետագայում, և այդ փաստը իր արտացոլումն է գտել նաև մեր ձեռագրական աղբյուրներում։

Հայագիտական գրականության մեջ, սակայն, թյուր կարծիք է հայտնված այն մասին, որ իբր Աղբերց վանքը, իր հերթին, հենց նույն Թանահատի կամ Թանատի վանքն է եղել, որ հետագայում վերանվանվել է նաև Ղարավանք։ Անհրաժեշտ է նշել, արդարև, որ այդ վարկածը չափազանց հախուռն է, ուստի և անհամոզիչ, որովհետև այն զուրկ է ամեն մի հիմնավորումից և չի ամրապնդվում փաստական ոչ մի տվյալով։ Ավելին. այն նույնիսկ հակապատմական բմբռնում է, որովհետև Թանահատի վանքն ու Աղբերց վանքը (հետագայում՝ Գլաձորը) զուգահեռ կերպով հարատևել են՝ մատենագրության մեջ թողնելով իրենց գոյատևման փաստական արձանագրությունները։ Այդ վարկածը առաջ է քաշել Գլաձորի մանրանկարչության ուսումնասիրմամբ հետամուտ եղած արվեստաբան Ա. Ավետիսյանը, որը հենվելով Ե. Լալայանի ուղղագրական բնույթի մի քանի կողմնակի դատողությունների ու արտահայտությունների վրա, շտապում է եզրակացնել. «Այսպիսով, ստացվում է, որ Թանատ (Ղարա-վանք) — Աղբերց վանքը նույն Գլաձորն է։ Եվ իրոք, ոչ մի կասկած լինել չի կարող, որ Թանատի վանքը հենց ինքը՝ Գլաձորն է»27. և

25 Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 1409, թ. 311ա։

26 Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի (Կերմանեցի), Վաղարշապատ, 1899, էջ՝ 29։

27 Ա. Ավետիսյան, Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», № Դ—Ե, 1956, էջ 85։

կամ՝ նույնպիսի անվերապահ պնդմամբ նա հայտարարում է «Այսպիսով, այժմ մեզ հայտնի Թանատի վանքը, կարելի է ասել, որ 13—14-րդ դարերում, համալսարանի գոյության ժամանակաշրջանում (նաև հետագայում???) հայտնի է եղել Գլաձոր կամ Աղբերց վանք անուններով»[29]։

Հերքելու համար նման պնդումների անճշտությունն ու, մեղմ ասած՝ հակապատմականությունը, անհրաժեշտ է քննել, թե որո՞նք են Ա. Ավետիսյանի ելակետները։ Այդ իսկ պատճառով հարկադրված ենք այստեղ մի քիչ երկար մեջբերում կատարել նրանից. «Համեմատելով Թանատի վանքի սահմանները որոշող տվյալները, — գրում է նա, — կարելի է տեսնել, որ հենց նույն այդ տվյալները վերաբերում են և Գլաձորին։ Այսպես, Ղ. Ալիշանի մոտ ասվում է, որ Գլաձորը սահմանակից էր Եկեղեաց ձորին։ Ըստ Օրբելյանի, ինչպես և Գարեգին արքեպսկ. Հովսեփյանի. Թանատ — Ղարա-վանքը նույնպես գտնվում է Եկեղյաց ձորին կից։

Կա նաև մի ուրիշ, ոչ պակաս հետաքրքիր, վկայություն։ Գարեգին արքեպսկ. Հովսեփյանը խոսելով Գլաձորի մասին, ցույց է տալիս, որ այն գտնվում է Սրկղունիքի Պռոշ իշխանի դաստակերտից («դարբաս») ոչ հեռու, իսկ ըստ Ե. Լալայանի այդ դաստակերտի մնացորդները գտնվում են Բաշքենդ գյուղի ծայրամասում (որը նույնացվում է Սրկղունիքի հետ), այսինքն՝ դարձյալ Թանատի վանքից ոչ հեռու»[30]։

Քաղվածքի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ տարբեր հեղինակների վկայակոչումները Թանատի և Գլաձորի տեղանքի որոշման հարցում՝ լիովին չեն համընկնում, այլ սոսկ մատնանշում են այդ մենաստանների տեղանքի՝ միևնույն գոտու (զոնայի) շրջանակում ունեցած այս կամ այն հարաբերական մերձավորությունը միմյանց նկատմամբ (համեմատիր՝ «Գլաձորը սահմանակից էր Եկեղեաց ձորին», իսկ «Թանատ-Ղարավանքը նույնպես գտնվում էր Եկեղյաց ձորին կից», մի դեպքում՝ Գլաձորը «գտնվում է Սրկղունիքի Պռոշ իշխանի դաստակերտից («դարբաս») ոչ հեռու», մյուս դեպքում՝ «դարձյալ Թանատի վանքից ոչ հեռու»)։ Այս բոլորից ակներև է դառնում միայն մի բան. ա՛յն. որ Թանատի վանքը և Գլաձորը իրենց տեղանքով գտնվելիս են եղել իրար հարևանության սահմաններում, մի բան, որ ընդունված է հայագիտական գրականության մեջ։ Փաստերի քննական վերլուծման դեպքում՝ միակ ճիշտ հետևությունը ա՛յս պիտի լիներ, որը և լիովին համապատասխանում է պատմական իրականությանը, և ոչ թե դրանից բռնազբոսիկ կերպով բխեցնել՝ երկուսի նույնացումը իբրև միևնույն վանքի տարբեր անվանակրումներ, ինչպես այդ անում է Ա. Ավետիսյանը։

Այնուհետև. Գլաձորի համալսարանի վերաբերյալ նյութերի հավաքման և հետազոտման առաջին մեծ երախտընկալները՝ Ղ. Ալիշանն ու Գ. Հովսեփյանը միանգամայն ճիշտ մոտեցում են ցուցաբերել, երբ հետին ակնարկ անգամ չեն արել՝ ինչպես Թանատի, այնպես էլ Աղբերց վանքի կամ Գլաձորի նույնության մասին։ Իսկ ի՞նչպես է վարվել բանասեր Ե. Լալայանը տվյալ հարցում. ամենևին հավակնություն չունենալով մատենագրական ստույգ տվյալների վերլուծմամբ հետևություններ ու եզրակացություններ անելու, մի կողմից՝ Թանատի, Ղարավանքի, մյուս կողմից՝ Գլաձորի, և այս երեքի փոխհարաբերության ճշգրտման մասին, Ե. Լալայանը անցողակի կերպով նրանց տեղադրության նկարագրությունն է տալիս՝ ուղեգրական տպավորությունների գրառման ոճով։ Մի դեպքում նա գրում է. «Ս. Խաչ վանքի արևմտեան կողմը, մօտ 2 վերստ հեռու։ Մալիշկայի գետակի երկրորդ վտակի ձախ ափին գտնւում է Ղարավանք (սև վանք) գիւղը, որ իւր անունն ստացել է մօտի տափարակ բլրակի վրայ սև քարերով շինուած վանքից։ Այս, թուրքերից Ղարա-վանք կոչուած, մենաստանը ԺԴ. դարում շինուած Թանահատի վանքն է, ուր ամփոփուած է 735 թ. Մոզում նահատակուած Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը»[31]։ Այստեղ,

---

28 Բոլորովին անհասկանալի է հեղինակի՝ փակագծում դրած «նաև հետագայում» պնդումը «համալսարանի գոյության ժամանակաշրջանում» բառակապակցությունից հետո. պատմական անժխտելի իրողություն է, որ Աղբերց վանքի առանձին հիշատակումը ձեռագրական աղբյուրներում հասնում է մինչև 13-րդ դարի 90-ական թվականները, իսկ Գլաձորի հիշատակումը 13-րդ դարի 90-ական թվականներից սկսած մինչև 14-րդ դարի 40-ական թվականները։ Եսայի Նչեցու մահվան հետ անկում է ապրում և միջնադարի աղջամուղջում սուզվում է նաև Գլաձորը, որից հետո դադարում են նաև ամեն կարգի հիշատակումները Գլաձորի մասին։

29 Ա. Ավետիսյան, նույն տեղում, էջ 86։

30 Ա. Ավետիսյան, նույն տեղում, էջ 85։ Ընդգծումները մերն են — Լ. Խ.։

31 Ե. Լալայան, Շարուր-Դարալագեազի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1905, գիրք XII, Թիֆլիս, էջ 267։

անշուշտ, առարկելու ոչինչ չունենք, որովհետև ասված է շատ պարզ ու մեկին, որ Թանահատ (կամ՝ Թանատ) վանքը, ուր ամփոփված է Ստեփանոս Սյունեցու աճյունը, միաժամանակ այժմ թուրքերի կողմից կոչվելիս է եղել Ղարա-վանք։ Սակայն հակասությունը ակնբախ է լինում չորս էջ հետո արված հայտարարության հետ. «Օրթաքենտից դէպի հիւսիս-արեւելք՝ ձորակի մէջ գտնւում է ԺԳ—ԺԴ դարերում մեծահռչակ Դայլաձոր կամ Դլաձոր մենաստանը, որ այժմ Ղարավանք է կոչւում»32։ Անհարիր բան է ստացվում. ինչպե՞ս թե տեղագրական երկու մերձավոր վայրերը առանձին-առանձին կոչվում են այժմ միևնույն անունով՝ Ղարավանք։ Դա առնվազն վրիպում է. նման պնդումը ոչնչով չի արդարացվում, ուստի և անընդունելի է։

Ղ. Ալիշանը ենթադրում է, որ Գլաձորը գտնվելիս է եղել Բաշքենդ Խերդի հարավակողմում կամ Բյուլբյուլ-Օլան գյուղի հյուսիսում՝ այս երկուսից մեկ մղոն հեռավորության վրա ամայի մի գյուղավայրում, որը հետագա դարերում Քոյլասար կամ Քուլպինա է հորջորջվել թուրքերի կողմից։ Հնչյունական նմանությունը՝ մանավանդ Քոյլասարի և Դայլաձորի (Գլաձորի) միջև՝ խիստ ակնբախ է. «Ի հարաւոյ Պաշքէնտ բերդի և ի հիւսիսոյ Պիւլպիւլօլան գեղջ — գրում է նա, — մղոնաւ չափ հեռի յերկոցուն ևս, յանձուկ միջոցի երկուց վտակաց գետակին՝ նշանակի ամայի գեօղատեղի Քէօյլասար կամ Քուլփւպինա անուն, որ թուի նշանակել զԴայլեձոր կամ Դայլիձոր կամ Դայլաձոր մեծահռչակ մենաստան ի ԺԳ — Դ դարս, յաճախ ևս գրեալ Դւաձոր»33։

Եթե Ալիշանի տեղագրական տվյալները գերազանցապես հիմնված են գրավոր աղբյուրների և նրանցից մակաբերվող մտահայեցության վրա, ապա Գ. Հովսեփյանի տեղագրական սահմանումները՝ նաև ականատեսի վկայությունների. վերջինս դեպի Գլաձոր կատարած իր ճանապարհորդության մասին գրում է. «Անցեալ ամառ (այն է՝ 1898 թ.—Լ. Խ.) ճեմարանի լսարանական մի խումբ ուսանողներով այցելեցինք Գլաձորի աւերակները. իզուր էր որոնել նոյնիսկ Ներսէս և Եսայի մեծ վարժապետների դամբարանների հետքն անգամ»34։ Իսկ Գլաձորի տեղագրական սահմանները նա գծում է այսպես. «Գլաձորն էր եղել Ուռբելեանների ախոյեանների առաջին օրորանը։ Այդ վանքը գտնւում է Պաշքեանդ գիւղի հիւսիս-արեւելեան կողմը մի ձորադոզի մէջ, Քիւլապինա կոչուած գոմանոցից փոքր ինչ դեպի արեւելք։ Հրաշալի է այն ձորակը, որ այս գոմանոցից դէպի Գլաձորի աւերակներն է ձգւում. ծաղկաւէտ ձորի հարաւային լեռան լանջերը պուրակներով են ծածկուած. սառնորակ աղբիւրները բղխում են երկու կողմից և մի կարկաչահոս, վճիտ առուակ կազմում, լի կարմրախայտներով։ Նոյնիսկ Գլաձորի թերակղզու հարաւային և հիւսիսային կողերից աղբիւրներ են բղխում, ուստի և երբեմն Աղբերց վանք ևս կոչուել է»35։

Ինչպես բերված քաղվածքների քննական համեմատությունը ցույց է տալիս, Ալիշանի և Հովսեփյանի հաղորդած տվյալները Գլաձորի տեղանքի մասին՝ հիմնականում համընկնում են իրար։ Մինչդեռ Ե. Լալայանի տեղագրական տվյալները, ըստ էության, հակասության մեջ չլինելով հանդերձ դրանց հետ, որոշակի շփոթության տեղիք է տալիս Գլաձոր — Ղարավանք նույնացման հարցում։

Այնուհետև. Լալայանից վերը բերված երկու քաղվածքներում էլ նույն ինքը բանասերը (Ե. Լալայանը) ոչ մի առնչակցություն չի տեսնում կամ հաստատում Թանատ վանքի և Գլաձորի

32 Նույն տեղում, էջ 271։ Ընդգծումը մերն է — Լ. Խ.։

33 Ղ. Ալիշան, Սիսական. էջ 130։ Ընդգծումը մերն է — Լ. Խ.։

34 Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, «Արարատ», 1899, էջ 160։

Ի դեպ այս ամառ մենք նույնպես եղանք Եղեգնաձորի (նախկին Քեշիշքենդ) Գլաձոր (նախկին Օրթաքենդ և Բաշքենդ գյուղերը) գյուղում, Թանահատի վանքում և Գլաձորի համալսարանի ենթադրված տեղանքում։ Զրույց ունեցանք Գլաձոր գյուղի ամենահասակավոր ծերունիների հետ. վերջիններս այն կարծիքն արտահայտեցին, որ Գլաձորի համալսարանի տեղանքը պետք է լինի այն վայրում, որտեղ այժմ կառուցված է Գլաձոր գյուղի դպրոցը, հենց Գլաձոր գյուղի սկզբին՝ Եղեգնաձորի կողմից։ Այսպես, 86 տարեկան Դավիթ Դավթյանը, որն ամենահասակավորն է Գլաձոր գյուղում, ասում էր, որ ինքը ավանդաբար պապերից լսել է, թե Գլաձորի համալսարանը գտնվել է հենց Օրթաքենդում, որտեղ այժմ կանգնած է Գլաձորի դպրոցը, և հետագա ժամանակներում թուրքերը քարուքանդ են արել այն։ Նույնն էին հավաստում նաև մյուս ծերունիները։ Սակայն այդ պնդումը մեզ քիչ հավանական է թվում, որովհետև միջնադարի մեր վանքերն ու մենաստանները իրենց դիրքով միշտ հեռու են եղել գյուղերից ու շեներից՝ մեկուսացած ժխորից և աշխարհիկ կյանքից, հարմարագույն տեղ ընտրելով նրանց համար բնության գրկում՝ մեծավ մասամբ բարձունքներում — իբրև «վերադիտողս»։

35 Գ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 160։ Ընդգծումը մերն է—Լ. Խ.։

միջև. ի դեպ՝ նա ոչ մի խոսք չի ասում նաև Աղբերց վանքի մասին։ Իսկ Թանատի վանքի և Գլաձորի նույնության մասին ակնբախ հակասությունը կոծկելու համար հարկավոր է ինչ-որ չափով առնչակցություններ հաստատել... որ և անհաջող կերպով փորձում է Ա. Ավետիսյանը։ Բայց այս անգամ էլ առաջանում են անսքող թյուրիմացություններ և հրամցվում անհարիր եզրակացություններ, որոնք առավել ևս ակնառու են դարձնում դրանց հիմքերի խախտությունը։ Բանասիրական հետախուզումներում բավական չէ միայն մտահայեցողությամբ առաջնորդվելը. դա շատ սայթաքուն ուղի է։ Այլ դրան, պարտադիր կարգով, անհրաժեշտ է զուգորդել երևույթների փաստաքննական վերլուծությունը։ Այսպես, եթե ճիշտ լինեին Ա. Ավետիսյանի հետևությունները ու պնդումները՝ Լալայանի սխալ կարծիքի վրա խարսխված, ապա դրանք պետք է ամրապնդվեին նաև մատենագրական աղբյուրներով, որոնք միակ հուսալի երաշխիքն են հետևությունների կամ պնդումների ստուգության ու ճշտության։

Իսկ ի՞նչ են ցույց տալիս հենց Թանատ վանքի պատերին դրոշմված արձանագրություններն ու ձեռագրական աղբյուրները. դրանք միաբերան վկայում են, որ Աղբերց վանքի, այնուհետև Գլաձորի համալսարանի գոյատևման ամբողջ ընթացքում և դրանից հետո էլ Թանատ վանքը հիշվում է իր սեփական անունով՝ իբրև մշակութային առանձին հիմնարկություն, որին բազմիցս արվել են նվիրատվություններ և տրվել ընծայականներ, որտեղ եղել են միաբաններ, որոնք ոչ միայն ձեռագրեր են արտագրել՝ թեև սակավ քանակությամբ, այլև պատարագ են մատուցել այս կամ այն ընծայաբերի ու նվիրատուի պատվին, երբեմն էլ՝ մանավանդ արձանագրություններում, այդ մենաստանը հիշվում է միայն իբրև «ուխտս սուրբ Ստեփանոսի» կամ «սուրբ Նշանի»։ Ավելին, ի հակառակեն դատելով իրողությունները, կարող ենք առանց վերապահության ասել, որ այդ արձանագրություններում ու Թանատի վանքում արտագրված ձեռագրական հուշարձաններում ակնարկ անգամ չկա Աղբերց վանքի կամ Գլաձորի մասին, որից կարելի լիներ ինչ-որ աղերսներ կամ առնչակցություններ հաստատել միջնադարյան այդ երկու մենաստանների միջև։ Բավարարվենք միայն մի երկու փաստ մեջբերելով։

1307 թվականին Պռոշ իշխանի հարսը՝ Թաճերը, Թանատի վանքին արած նվիրատվության առթիվ հետևյալ արձանագրությունն է քանդակել տվել նրա պատերից մեկում. «Կամաւն աստուծոյ ես Թաճեր, դուստր Ո-փանի ամուսին Հասանայ ասպարապետին Հայոց որդւոյն Պռոշայ, եւու ընծայ հալալ ընչից իմոյ հայրենի տանս մեր Թանադի վանից առաջի սուրբ Նշանիս, որ առաջնորդս եւ միաբանք սահմանեցին Դ պատարագ ինձ աւագ հինգշաբթին աւրն Հոգւոյն գալստեան, բ Փոխման Աստուածածնին. կատարիչքն աւրհնին»[36]։ Թանատի վանքի մի այլ արձանագրության մեջ կարդում ենք. «Կամաւն Աստուծոյ ես Ասլան ափայս և իմ որդիքս միաբանեցաք սուրբ Ստեփանոսիս և սուրբ Նշանիս և տվաք ճ. դեկան ընծայ. վարդապետք և միաբանք սահմանեցին զշաբաթն Զատկին. կատարիչք աւրհնին յԱստուծոյ. թվին ՉՀԵ (1326)»[37]։ Իսկ 1335 թվականին գրված հիշատակարանում, ի շարս այլ վանքերի կից պարոն Հայրումի կողմից կառուցված «աղոթանոց»-ների, նշվում է նաև Թանատի վանքինը. «Յանուն աստուծոյ և կարողութեամբ սուրբ Հոգւոյն ես պարոն Հայրումս շինեցի զաղօթանոցն մեր սուրբ մենաստանացս զՔարի վանուցս, զԹանաճատի վանուց. և զսուրբ Կաթուղիկէի. զի այն էր խնդրուածք իմ յԱստուծոյ, և գնեցի ի Սապուխի որդոյ Մահմատայ զձորի յեզեր ձիթահանքն սուրբ կաթուղիկէիս լուսացու, և ետու ի ձեռն Իբրանոս քահանային (Նույն ճաշոցի ստացողին) վասն փրկութեան հոգւոյ իմոյ և արևշատութեան զաւակաց իմոց։ Ես Առաքել վարդապետս միջնորդ և վկայ եմ լս հաստատ և անդարձ վախմիս, ի թուաբերութեանս հայկազեան տումարի ՉՁԴ (1335)»[38]։

Ուշագրավ է, որ բերված սույն արձանագրություններն ու ձեռագիր հիշատակագրությունը միաժամանակ վերաբերում են Գլաձորի համալսարանի գործունեության ամենափայլուն շրջանին։ Բնականաբար, հարց է ծագում. ինչպե՞ս կարելի է տրամաբանորեն համատեղել ու աղերսներ հաստատել Թանատի և Գլաձորի միջև, մինչև անգամ դրանք նույնացնել՝ ա՛յն դեպքում, երբ զուգահեռաբար մեզ են հասել, մի կողմից՝ բազմաթիվ ձեռագրական աղբյուրներում Գլաձորի համալսարանի մասին հիշատակությունները, մյուս կողմից՝ Թանատի վանքի պատերին քանդակված արձանագրություններն ու ձեռագիր աղբյուրների հիշատակագրությունները՝ առանձին-առանձին։ Դա անհարիր բան է։ Ավելին. ունենք նաև վկայություն Գլաձորի գոյատևումից նույնիսկ մեկուկես դար հետո՝ Թանատի վանքի մասին, որի միաբաններից Հովհաննես անունով մի

---

[36] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 121, հմմտ. նաև Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք..., մ. Գ, էջ 17։

[37] Ղ. Ալիշան, Նույն տեղում, էջ 122։

[38] Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք..., մասն Դ, էջ 101։

գրիչ 1491 թվականին «Գեղամայ Գաւառ գիւղում» արտագրել է մի ճաշոց. այդ նշանակում է, որ Թանատի վանքը գոյատևել է մինչև 15-րդ դարի վերջերը՝ ինքնուրույնաբար, իր մեջ ունենալով գործող միաբանություն։ Այս կապակցությամբ «Ճանապարհորդական նկատողություններ» հոդվածաշարում կարդում ենք. «... Ալէքսանդրապոլու մօտ, Ղանլիչայ գիւղում, Մարմաշինու վանքի մէջ ես տեսել եմ մի ձեռագիր ճաշոց, որ ինչպէս երևում է նորա յիշատակարանից, արտագրած՝ է Գեղամայ Գաւառ գիւղում, 940 հայոց կամ 1491 Քրիստի թուականին։ Նորան արտագրել է Յովհաննէս անուն կարգաւոր, որ եկել է Թանահատի վանքից, «որ է աթոռ սուրբ հայրապետին Սիւնեաց տէր Ստեփաննոսին»39։ Սույն վկայությունը ծանրակշիռ փաստարկ է նաև այն բանի օգտին, որ Թանատ վանքը և Գլաձորը երբեք էլ նույնական չեն եղել, այլ, ընդհակառակն, Թանատ վանքը իր գոյատևման ամբողջ ընթացքում ճանաչվել է միայն իր սեփական անունով՝ առանց որևէ ազերս կամ առնչություն ունենալու Աղբերց վանքի կամ Գլաձորի հետ։ Այդ պատճառով էլ միանգամայն մերժելի է Ա. Ավետիսյանի փաստաբուրկ և անձնապաստան հայտարարությունը. «Մենք հակված ենք այն կարծիքին, — գրում է նա, — որ Գլաձորի ճնագույն և հիմնական անվանումը եղել է ոչ թե Աղբերց վանք, ինչպես ենթադրել է Ղ. Ալիշանը, այլ Թանատի վանք»40։ Ի դեպ նկատենք, որ Ալիշանի հասցեին արված դիտողությունը բոլորովին անտեղի է, որովհետև Գլաձորի «հնագույն և հիմնական» անունը Աղբերց վանք լինելը, ինչպես վերը տեսանք, ոչ թե Ալիշանն է «ենթադրում», այլ՝ ձեռագրական աղբյուրներն են հավաստում...։

Այսպես, ուրեմն, ամփոփենք. փաստերի քննությունը հանգեցնում է մեզ երկու գլխավոր հետևությունների.

1. Դեռևս մինչև 13-րդ դարի վերջին տասնամյակը Գլաձորը աղբյուրներում հայտնի է եղել միայն Աղբերց վանք անունով. այլ կերպ ասած՝ ուսումնական այդ կենտրոնի Գլաձոր անվանումը ոչ միայն Ներսես Մշեցու օրոք առհասարակ չի եղել, այլև չի եղել Եսայի Նչեցու ուսուցչապետության սկզբնական շրջանում՝ մինչև 1290-ական թվականները։ Առաջին տեղեկությունը Գլաձորի մասին հաղորդվում է 1291 թվականից։

2. Մի անգամ վերանվանվելով Աղբերց վանքը որպես Գլաձոր՝ հարատևում է վերջինս իբրև այդպիսին մի ամբողջ հիսունամյակ, լայն ճանաչում գտնելով գիտական և ուսումնական շրջաններում՝ ինչպես պատմական Հայաստանում, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում. եթե Գլաձորի գոյատևումն ու ճակատագիրը, ի շարս սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների փոփոխման, կապված է եղել նաև Եսայի Նչեցու հետ (որի մահվամբ էլ Գլաձորը սուզվում է միջնադարի մշուշում, որով և դադարում են բոլոր տեսակի հիշատակագրությունները Գլաձորի մասին), ապա Թանատի վանքի գոյության մասին ձեռագրական աղբյուրները շարունակում են հուշել մինչև անգամ Գլաձորի անկումից մեկուկես դար հետո։

Л. Г. Хачерян

К ВОПРОСУ ОБ УПОМИНАНИИ ГЛАДЗОРА В ИСТОРИЧЕСКИХ ИСТОЧНИКАХ

Резюме

В статье пересматривается и подвергается критическому анализу вопрос о том, с какого времени встречается в рукописных сведениях наименование крупнейшего научного центра средневековой Армении — Гладзор. На основании фактов, с помощью широкого использования рукописных источников показано, что Гладзор до последнего десятилетия 13 в. был известен лишь под названием Ахберц ванк. Первые сведения о Гладзоре датируются 1291 годом. Ахберц ванк был переименован в Гладзор и в течение целого пятидесятилетия находил всеобщее признание как крупнейший научный и культурный центр.

39 Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, «Արարատ», 1889, էջ 104։

40 Ա. Ավետիսյան, Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», 1956, թ. Ե—Դ, էջ 86։

В статье критикуется и отвергается также выдвинутый в последнее время довод, согласно которому произвольно предполагается, будто Гладзор и монастырь Танат являлись различными названиями одного и того же культурного центра. С помощью рукописных сведений показывается, что хотя Гладзор и монастырь Танат по своему месторасположению находились по соседству, но как культурные центры существовали раздельно, независимо друг от друга, и каждый из них упоминался в рукописных источниках под определенным названием. Эти филологические уточнения имеют важное значение с точки зрения всестороннего изучения истории зарождения крупнейшего центра научной мысли средневековой Армении — Гладзорского университета.